HAL
open science

“2019 Global Go To Think Tank Index”-

Arestakes Simavoryan

▶ To cite this version:

Arestakes Simavoryan. “2019 Global Go To Think Tank Index”- . 2020. hal-03340030v1

HAL Id: hal-03340030
https://hal.science/hal-03340030v1

Submitted on 9 Sep 2021 (v1), last revised 10 Apr 2022 (v3)

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L’archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d’enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

Author: Arestakes Simavoryan

Publication date: February 6, 2019

Source: https://bit.ly/3A0XbEC

Publisher: Orbeli Center

Արեստակես Սիմավորյան

«Օրբելի» վերլուծական-հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ «2019 GLOBAL GO TO THINK TANK INDEX»-ՈՒՄ

2020թ. հունվարի 27-ին «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» նախագծի շրջանակներում Փենսիլվանիայի համալսարանը հրապարակել է վերլուծական կենտրոնների գլոբալ վարկանիշավորման վերաբերյալ «2019 Global Go To Think Tank Index» հերթական 14-րդ զեկույցը [1]:

Ինչպես նշված է ուսումնասիրության մեջ, 2019թ.-ի անվանակարգի և կենտրոնների ընտրության գործընթացն սկսելուց առաջ իրենց թիմը լայնածավալ հետազոտություն է իրականացրել՝ թարմացնելով աշխարհի ուղեղային կենտրոնների տվյալների սեփական տեղեկատվական շտեմարանը: Զեկույցը կազմելիս հաշվի են առնվել նաև փորձագիտական կառույցների թվաքանակի, ընթացիկ իրավիճակի ու միտումների վերաբերյալ տարբեր տարածաշրջանների երկրների փորձագիտական հանրության և հետազոտական հաստատությունների կողմից արված առաջարկություններն ու դիտողությունները:

Ընդհանուր առմամբ, ըստ ուսումնասիրության, աշխարհում հաշվվում է 8248 «ուղեղային կենտրոն», որոնք գործում են եվրոպական (2219), հյուսիսամերիկյան (2058), ասիական (1829), Հարավային ու Կենտրոնական ամերիկյան (1023),

ենթասահարյան Աֆրիկայի (612), մերձավորարևելյան և հյուսիսաֆրիկյան (507) տարածաշրջանների երկրներում:

Ուղեղային կենտրոնների քանակով առաջին տասնյակը զբաղեցնում է ԱՄՆ-ն (1871), որին հաջորդում են Հնդկաստանը (509), Չինաստանը (507), Մեծ Բրիտանիան (321), Արգենտինան (227), Գերմանիան (218), Ռուսաստանն (215), Ֆրանսիան (203), Ճապոնիան (128), Իտալիան (114):

Մեր տարածաշրջանում հարևան երկրներից կենտրոնների քանակով առաջատարն է Իրանը՝ 64, այնուհետ Թուրքիան՝ 48, Վրաստանը՝ 35, Ադրբեջանը՝16: Համաձայն զեկույցի՝ Հայաստանում գործում է 30 «ուղեղային կենտրոն»: Հաշվի առնելով, որ զեկույցում առկա չէ վերոնշյալ կենտրոնների ցանկը, հնարավոր չէ պարզել, թե հատկապես որ հաստատություններն են դիտարկվել որպես «ուղեղային կենտրոն»: Այս համատեքստում հարկ է հիշատակել ոլորտի փորձագետ, ք.գ.դ. Վարդան Աթոյանի դիտարկումը, ըստ որի՝ «Հայաստանի ուղեղային կենտրոնների ոլորտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անկախության վերականգնումից ի վեր երկրում ֆորմալ առումով ստեղծվել են մի քանի տասնյակ ուղեղային կենտրոններ կամ այդ ձևաչափին որոշակիորեն համապատասխանող հաստատություններ: Սակայն դրանցից շատերը գոյություն են ունեցել կամ բացառապես ձևական, ֆորմալ առումով, կամ ունեցել են ակտիվ գործունեության չափազանց կարճ ժամանակահատված, որից հետո պասիվացրել կամ ընդհանրապես դադարեցրել են գործունեությունը և փակվել: Այդ առումով ներկայումս իրավիճակը սկզբունքորեն մեծ փոփոխություններ չի կրել» [2]:

Կենտրոնական Ասիայի լավագույն ուղեղային կենտրոններ անվանակարգում Հայաստանը ներկայացված է 10 հաստատությունով՝

1. Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը, (ACNIS)՝ 8-րդ տեղում
2. Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը (ACGRC)՝11-րդ տեղում,
3. Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ (AST)՝12-րդ տեղում,
4. Քաղաքացիական հասարակության ինստիտուտը (CSI)՝ 24-րդ տեղում,
5. Հանրային քաղաքականության ինստիտուտը՝ 27-րդ տեղում,

6. Քաղաքական վերլուծությունների Թուրփանջյան կենտրոնը (TCPA)՝ 29-րդ տեղում,
7. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը (CRRC)՝ 32-րդ տեղում,
8. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնը՝ 59-րդ տեղում,
9. Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC)՝ 61-րդ տեղում,
10. «Նորավանք» հիմնադրամը՝ 63-րդ տեղում:

Բացի այդ, հայաստանյան վերլուծական հաստատությունները ներառվել են այլ անվանակարգերում: Պաշտպանության և ազգային անվտանգության ոլորտներում գործունեություն ծավալող աշխարհի լավագույն ուղեղային կենտրոններ անվանակարգում ընդգրկվել է Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը՝ զբաղեցնելով 106-րդ տեղը: Ներքին տնտեսական քաղաքականության լավագույն փորձագիտական կենտրոններից՝ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (144-րդ հորիզոնական):

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ICHD)՝ ընգրկվել է թափանցիկության և լավ կառավարման ոլորտում լավագույն ուղեղային կենտրոններ անվանակարգում (27-րդ հորիզոնական), շահապաշտպան գործունեություն ծավալող լավագույն կենտրոնների շարքում՝ Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը՝ (60-րդ հորիզոնական), իսկ լավագույն անկախ հետազոտական կենտրոնների շարքում՝ Միջազգային քաղաքականության հետազոտական խումբը (28-րդ հորիզոնական):

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը ընդգրկվել է լավագույն համալսարանական ուղեղային կենտրոններ անվանակարգում՝ զբաղեցնելով 94-րդ տեղը: Ուշագրավ է, որ «2019 Global Go To Think Tank Index»-ում, որպես նորարարություն, հետազոտողներն առաջին անգամ առանց վարկանիշավորման ներկայացրել են տարբեր երկրներում գործող ՈՒԿ-ների կողմից հրապարկված լավագույն հետազոտությունները: Այս տեսանկյունից հայաստանյան վերլուծական կենտրոնների կողմից հրապարկված հետազոտություններից ներառված են միայն «Ամբերդ» հետազոտական կենտրոնի՝ «Հայաստանի Երկրորդ շավիղի

դիվանագիտության խնդիրների շուրջ» և «Ինչպես բարելավել ՀՀ համալսարանների դիրքերը վարկանիշավորման զեկույցներում» խորագրով աշխատությունները:
Միևնույն ժամանակ, հետազոտողներն ուշադրության դիտման արժանի կենտրոնների շարքում ներառել են «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ն (99-րդ հորիզոնական): Գլոբալ մակարդակում մոտ 50 նորաստեղծ ուղեղային կենտրոնների ցանկում առանց վարկանիշավորման ընդգրկվել է նաև «Օրբելի» վերլուծական-հետազոտական կենտրոնը (էջ 187):
Հայաստանի հետ միասին Կենտրոնական Ասիայի գոտում ընդգրկված են նաև Վրաստանի և Ադրբեջանի ՈԻԿ-ները՝ սակայն որոշ բացառություններով: Օրինակ՝ Վրաստանի մի քանի կենտրոն տեղ են զբաղեցրել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի առաջատար ՈԻԿ-ների ցուցակի տարբեր հորիզոնականներում:

Վրաստան

1. Caucasus Institute for Peace, Democracy and Development (CIPDD),
2. Institute for Policy Studies (IPS),
3. New Economic School (NESG),
4. Strategic Research Center (SRC),
5. Caucasus Research Resource Center (CRRC),
6. South-Caucasus Institute of Regional Security (SCIRS),
7. Georgian Research and Educational Networking Association (GRENA),
8. Liberty Institute,
9. Partnership for Social Initiatives (PSI),
10. Georgian Foundation for Strategic and International Studies (GFSIS),
11. ISET Policy Institute,
12. PMC Research Center.

Ադրբեջան

1. Center for Economic and Social Development (CESD),
2. Caucasus Research Resource Center (CRRC),
3. Free Minds Association (FMA),
4. Economic Research Center (ERC),
5. Entrepreneurship Development Foundation (EDF),
6. Center for Strategic Studies (SAM),

7. Institute for Scientific Research on Economic Reforms,
8. Center for Analyses of Economic Reforms and Communication,
9. Public Finance Monitoring Center (PMFMC),
10. National Budget Group (NBG),
11. Azerbaijan Think Tank Alliance (ATTA):

Թուրքիայի, ինչպես նաև Իրանի լավագույն ուղեղային կենտրոնները ներառված են գլխավորապես մերձավորարևելյան և հյուսիսաֆրիկյան տարածաշրջանը ներկայացնող կենտրոնների անվանացանկում: Նկատենք, որ մի շարք փորձագիտական հաստատություններ, ներառված չլինելով վերոհիշյալ ցուցակում, վարկանիշավորվել են տարբեր անվանակարգերում՝ ըստ իրենց մասնագիտական ուղղվածությունների և գործունեության:

Հատկանշական է, որ նույն կենտրոնը ներկայացված է նաև մի քանի անվանակարգերում, ինչպես, օրինակ, կառավարությանը մոտ գտնվող թուրքական Centre for Economics and Foreign Policy Studies (EDAM)-ը միանգամից արժանացել է պաշտպանության և ազգային անվտանգության, արտաքին քաղաքականության ու միջազգային հարաբերությունների, միջազգային տնտեսական քաղաքականության ոլորտներն հետազոտող, լավ կառավարվող, ինչպես նաև տարեկան $5 միլիոնից պակաս բյուջե ունեցող լավագույն կենտրոններ անվանակարգերին:

Աշխարհի լավագույն ՈՒԿ-ների շարքում թուրքական հաստատություններից 78-րդ հորիզոնականը զբաղեցրել է Turkish Economic and Social Studies Foundation (TESEV)-ը, իսկ Association for Liberal Thinking (ALT)-ը՝ 89-րդը:

Այլ անվանակարգերում Թուրքիան ներկայացված է հետևյալ փորձագիտական հաստատություններով. պաշտպանության և ազգային անվտանգության ոլորտում՝ Center for Economic, Political and Strategic Research (TESAM)-ն ու International Strategic Analysis and Research Center (USTAD)-ը, կրթական ոլորտում՝ Սաբանջը համալսարանի Istanbul Policy Center-ն ու շահույթ չհետապնդող Education Reform Initiative (ERI)-ը, արտաքին քաղաքականության ու միջազգային հարաբերությունների բնագավառում՝ Economic Policy Research Foundation of Turkey (TEPAV)-ը, Global Relations Forum-ը և International Strategic Research Organization (USAK)-ը:

Սննդի անվտանգության ոլորտում տեղ է գտել Trakya Agricultural Research Institute Directorate-ը, որպես լավագույն պետական հետազոտական կենտրոն՝ Թուրքիայի ԱԳՆ Center for Strategic Research (SAM)-ը, քաղաքական կուսակցությանը կից՝ Foundation for Political, Economic and Social Research (SETA)-ն, լավագույն կոնֆերանս անցկացրած կենտրոնների շարքում ճանաչվել է Թուրքիայում գործող Friedrich Ebert Foundation (FES)-ի գրասենյակը:

Bahcesehir University Center for Economic and Social Research (BETAM)-ը (61-րդ տեղ) ու Istanbul Kültür University for Global Political Trends Center-ը (70-րդ տեղ) ընդգրկված են համալսարանական լավագույն հաստատություններ անվանակարգում: Մերձավորարևելյան և հյուսիսաֆրիկյան տարածաշրջանի կենտրոնների ցանկում ներառված են ևս երկու թուրքական հաստատություն՝ European Stability Initiative (ESI)-ն ու Al Sharq Forum-ը, որոնք այլ անվանակարգերում տեղ չեն գտել:

Ինչ վերաբերում է իրանականին, ապա հետազոտությունում այդ երկիրը ներկայացնող յոթ ուղեղային կենտրոններից աշխարհի առաջատար հաստատությունների շարքում (աշխարհի լավագույնը անվանակարգ՝ չհաշված ԱՄՆ ՈՒԿ-ները) հայտնվել է միայն Ravand Institute for Economic and International Studies-ը՝ 147-րդ տեղում: Սննդի անվտանգության ոլորտում առաջատար կենտրոնների շարքում տեղ է զբաղեցրել երեք հետազոտական կենտրոն՝ Agricultural Research, Education and Extension Organization (AREEO)-ն, Agricultural Biotechnology Research Institute of Iran-ն ու National Nutrition & Food Technology Research Institute-ը, բնապահպանության բնագավառում՝ Centre for Sustainable Development (CENESTA): Իսկ ահա Institut Francais de Recherche en Iran (IFRI)-ն ու Institute for Political and International Studies (IPIS)-ը հաշվարկված են միայն մերձավորարևելյան և հյուսիսաֆրիկյան տարածաշրջանի կենտրոնների ցանկում:

Հարկ ենք համարում նշել, որ հետազոտությունը զերզ չէ թերություններից: Օրինակ՝ Ադրբեջանի Հանրապետության նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (SAM), որն ընդգրկվել է աշխարհի լավագույն հետազոտական կենտրոնների շարքում, լուծարվել է դեռևս 2019թ. հունվարին՝ Ի. Ալիևի հրամանագրով:

Նույնը կարելի է ասել նաև ժամանակին Թուրքիայի ուղեղային կենտրոնների շարքում առաջատար դիրքեր զբաղեցնող, լիբերալ ուղղվածության Միջազգային ռազմավարական հետազոտությունների կազմակերպության (USAK) մասին, որը փակվել է թուրքական իշխանությունների կողմից իրականացվող, այսպես կոչված, գյուլենականների դեմ պայքարի շրջանակներում:

Աղբյուրներ և գրականություն

1. McGann, J. (2020). 2019 Global Go To Think Tank Index Report. *University of Pennsylvania*, https://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1018&context=think_tanks
2. Atoyan, Vardan, Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները (Think Tanks: The Smithies of Strategic Ideas) (2019). Yerevan, Zangak Publishing House, 216 P., Available at SSRN: https://ssrn.com/abstract=3856159